Նոտարական ակտի կոդ: 591-20181005-88-3081399
Նոտարական ակտի գաղտնագիր: 6DOMAU

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

23.07.2009 թվականին կնքված և սեղանամատյան թիվ 1657 համարով գրանցված Վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Վարդենիս
Երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի հինգին 05.10.2018թ.

ՀՀ, Գեղարքունիքի մարզի, Մարտունի համայնքը գրանցման վկայական՝ սերիա 01 Բ 837376, ՀՎՀՀ 08203584, ի դեմս լիազորված անձ՝ Իսահակ Արթուրի Զաքարյանի, ծնված՝ 09.07.1992թ., նույնականացման քարտ՝ 009429101, տրված՝11.07.2018թ., 043-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Մյասնիկյան փողոց, շենք 28, բնակարան 6 հասցեում, համաձայն 05.10.2018թ. տրված լիազորագրի, մի կողմից «Վարձատու» և <<ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (գրանցման համարը՝ 286.185.892303, գրանցման ամսաթիվը, 17.03.2016թ., ՀՎՀՀ՝ 02647057, վկայականի համարը՝ 01Բ1042303) ի դեմս գլխավոր քարտուղար՝ Էդգար Գեվորգյանի, ում անունից հանդես է գալիս ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության սպասարկման թիվ 10 բաժնի գլխավոր հարկային տեսուչ՝ Մայիս Լեվոնի Շահինյանը, ծնված՝ 31.08.1985թ., նույնականացման քարտ՝ 005782008, տրված՝ 09.03.2017թ., 040-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Նորակերտ, 1-ին փողոց, տուն 49 հասցեում, համաձայն 06.09.2018 թվականին տրված թիվ 1/18-1/52575-18 լիազորագրի, մյուս կողմից «Վարձակալ», այսուհետ երկուսը միասին Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1.1. Հետագա հանագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝ Հաստատել 2018 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը, համաձայն թիվ 1 հավելվածի:
1.2.Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2018 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում <<Կողմերի>> կողմից այն ստորագրման, նոտարական կարգով վավերացման և լիազոր մարմնում գրանցման պահից:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:

2.3 Սույն Համաձայնագիրի և Պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն համաձայնագիրը:

3.Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան :

3.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է 23.07.2009թվականին Մարտունի նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա Մելքոնյանի կողմից կնքված թիվ 1657 գրանցամատյանով հաստատված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մաս:

3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով : Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

3.5.Համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է Վարձատուի կողմից :

3.6. Համաձայն ՀՀ քաղ օր - ի 611 հոդ. սույն համաձայնագրից բխող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումում երեսուն օրվա ընթացքում:

3.7. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 4 (չորս) օրինակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է Գեղարքունիքի մարզի նոտարական տարածքի Վարդենիսի նոտարական գրասենյակի վարույթում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին:

Այս համաձայնագիրը ստորագրելով դիմումատուն հավաստում է, որ կարդացել և ամբողջությամբ ընդունում է սույն համաձայնագրին վերաբերող հատուկ դրույթները և պայմանները:

Վարձատու Լ/Ա

Վարձակալ

Երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի հինգին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ Գեղարքունիքի մարզի նոտարական տարածքի նոտար Տիգրան Ֆելիքսի Սարգսյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ, կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև լիազոր ներկայացուցչի իրավունքները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում 1688 ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Տիգրան Ֆելիքսի Սարգսյան

Հավելված 1
23.07.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1657 համարով
գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի
թիվ 7 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում	
	Ծառայության անվանումը	4-րդ եռամսյակ	**Ընդամենը՝ Տարի**
1.	ք. Մարտունի, Շահումյան 2 հասցեում գտնվող վարչական շենքի վարձակալություն	502 320	**502 320**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

«ՎԱՐՁԱՏՈՒ»

ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Մարտունի

Հասցե՝ ք. Մարտունի, Շահումյան 2
ՀՎՀՀ 08203584
Հ/Հ 900145101185
Մարտունի համայնքի ղեկավարի

Լիազորված անձ՝

_____ **Ի. Զաքարյան**
(ստորագրություն)

«ՎԱՐՁԱԿԱԼ»

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն

Լիազորված անձ՝

_____ **Մ. Շահինյան**
(ստորագրություն)